երթայ նա ի նամակն իւր· եւ կոչեն զնա Եէր
խալիֆայ:

Եւ ես տեսեալ զայս ամենայն՝ հիանայի
ներոգութեանն Աստուծոյ, թէ որպէս փառք
եւ մեծութիւն է ամէն ուրացողացն զնա: Եւ
միշտ վարանէի ի միտս իմ, թէ որպէս հա-
սանեմ փափագանացս· եւ զնամ յուխտ
եղեալ տեղիս· բայց զի ձմեռն էր եւ ճանա-
պարհնին մեծ տալղալուխ:

4· ՇՐՋԱԳԱՅՈՒԹԻՒՆ ԱՌ ԱՓԱՄԲՐ ԵԳԷԱ-ԿԱՆ ԵՒ ՄԱՐՄԱՐԱԿԱՆ ԾՈՎՈՒՑ

Եւ եկն ի Ստամպօլ վարդապետ մի
Մկրտիչ անուամբ Խարբերթցի, աշակերտ
Ազարիայ կաթողիկոսին: Նա իմացեալ վասն
իմ եթէ գիր գիտեմ, էառ զիս առ ինքն չրջել
ընդ նմա յաշխարհն Բիւթանացոց: Եւ ասաց 5
ինձ թէ Մուշ յինէն հինգ աւուր ճանապարհ
է, ես զքեզ տանիմ: Վասն այն կամաւորեցայ
ես եւ մտի առ նա սպասաւորել եւ չրջիլ ընդ
նմա ուր եւ երթիցէ:

Եւ ելեալ ի Ստամպօլայ՝ մտաք ի նաւ· 10
եւ երկրորդ օրն եկաք ի ՄՈՒՏԱՆԻԱՅ, որ է
սկելէ· եւ կայր քանի մն տուն հայի· եւ էրէց
մի· բայց եկեղեցի չկայր· ի տան միում ժամ
ասէին: Եւ կացաք անդ հինգ օր· եւ զնացեալ
տեսաք զբաղանին, ուր Յոհանէս աւետարա- 15

5 աշխարհն Փութանացոց: — 7 կամաւորեցայ:
— 8 նայ: